

դարձեալ քաղցած են՞ դարձեալ կիսամեկ, որովհետեւ տէրը չ'են իրենց իրաւունքին, իրենց աշխատանքին. նրանք հորոհեր, ստորով—ոռայեաններ են: Այդպէս են վճռել նրանց ճակատագիրը գիւղական հարկււրաւոր գիշատիչ տէրերը, որոնք օրէց օր արիւնաքամ են անոււմ խեղճ գիւղացիներին: Բայց պատկերը դրանով չ'ի վերջանում: Գիւղացիների կեանքը դառնացնում են նաեւ աւազակային հարստահարութիւնները, որ այնքան սովորական երևոյթ է այդ դժբախտ գաւառում: Այս բոլորի վրայ աւելացնենք և այն խաւարն ու տգիտութիւնը, որ իշխում են աշաղթելիօրէն բոլոր գիւղերում: Ամբողջ գաւառում չ'են եղել և մինչև օրս էլ դեռ չ'կան օրինակելի փառանաւոր դպրոցներ, որ նպաստէին գիւղացիների մտաւոր, բարոյական դաստիարակութեանը: Կուլտուրապէս քարացած այդ միջավայրում գիւղացիները մնացել են յետմնաց վիճակի մէջ, տգէտ ու անուս, թաղւած նախապաշարութեանի և անշարժութեան մէջ:

Ահա մի այդպիսի կորած և խաւար միջավայրի ու շրջապատի մէջ է սնւել և մեծացել Յարթունը և այդտեղ էլ յօրինել իր երգերը: Այդ միջավայրը նրան շատ բան չ'ի տւել, բայց յաճախ այնտեղ են եկել մի շարք աշուղներ և երգել ու նազել: Նրանց քնարի լարերից ներշնչւել է Յարթունը և որոշ ազդեցութիւններ կրել: Նրա վրայ ազդել են պարսկահայ աշուղներից Ղուլ Էգազը, Ղուլ Արզունին, Ամիր օղլին, Բաղըր օղլին և նա մանաւանդ Ղուլ Յովհաննէսը: Նա ազդւել է նաեւ պարսիկ բանաստեղծութիւններից: Երևում է, որ նա ծանօթ է եղել արևելքի մեծ քնարերգուներին՝ Հաֆիզին, Ֆիրդուսուն, Սաադին և ներշնչւել է նրանց մօտիւններից: Յատկապէս ազդւել է Ֆիրդուսուն «Շահնամէից»։ Նա իր «Լոյսիտիկի պէս փայլում ու» խորագրով սիրային երգի մէջ յիշատակում է Շահնամէի դիւցազնները՝ Ռոստամի ու Զաւրը:

Ի՞նչ արդեօք Յարթուն օղլին ուրիշ տպաւորութիւններ և ազդեցութիւններ կրե՞լ է

իր կատարած ճանապարհորդութիւնից. արդեօք գեղեցիկ վանք, վարազը, Աղւթամարը, Էջմիածինը, Ս. Կարապետը նրա հոգու վրայ դրե՞լ են որևէ դրոշմ, մենք դժարանում ենք որևէ կարծիք արտայայտել, քանի որ այդ մասին երգերի մէջ ո՛չ մի յիշատակութիւն չ'կայ և մեր ձեռքում էլ չ'ունենք ուրիշ աղբիւրներ, որով, առ այժմ, բաւականանում ենք այսօր ցանով:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

(Շառաբայերի)

ԼԵԶՈՒԱԳԻՏՈՎՈՆ

ՀԱՅՅԵՐԷՆ ՆՈՐ ԲԱՌՆԵՐ

Ժ Ա Մ Ա Գ Ի Ք Ի Մ Ե Զ

(Վ. Ղըշտ. 1903)



«Այնպիսի «անգանազանելի, ոչ—տարբեր, նման կամ հաւասար»։ Բաշխես զհացն մաքրական, Զարինդը բմպել տաս սոսկական, Հանես ի վեր գերաստիճան, Յիմանալեացն անջոկական (էջ 960), առնուած է Տաղարանէն»:

Հոնրատե՛կ «ամենուն փափագելի»։ Յնծայ և զուարճանալ եկեղեցի սուրբ, տօնելով մեծաւ հանդիսիւ զհանրատենչ յիշատակս քո (էջ 592):

Յանձնաւելի «յանձն առնելիք և կատարելիք բան»։ Այլ և մեղայ ամենայն պատուիրանացն Աստուծոյ, յանձնառնելեացն և հրաժարելեացն, զի ո՛չ զյանձնառական կատարեցի և ո՛չ ի հրաժարելեացն հեռացայ (էջ 9)։ — Դրանօթ բառ է, բայց իբրեւ երկու բառ (յանձն առնելի) համարելով՝ մոռցուած է բառաբանին մէջ առնելու:

Ուղիղա՛կ «նուիրաբերել, ընծայաբերել, զոհնել»։ Այլ զողալով առաքինաբար զինքն ուղերձեալ (տպ. շղերձեալ) ի յանիւս աստուածային զանձուցն հոլովիցի աղաղակելով առ Քրիստոս (էջ 604):

ՀԱՅԵՐԷՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

Կ Ի Ի Բ Ղ Ի Ա Ղ Ե Ք Ս Ա Ն Դ Ի Ր Ա Ց Ի Ո Ց

ՊԱՐԱՊՄԱՆՑ ԳՐՈՑ ՄԷՁ

(տպ. Պոլսո 1717)

Անադարտաբար «մաքուր՝ անաղարտ կերպով»։ Գնալ ընդ ուղիղ և անաղարտաբար քննական սրտոց մերոց հարց (էջ 81 ր)։

Անհրաժեշտաբար «յանդգնաբար»։ Շեղեալ էր անհրաժեշտաբար յապտտամբութիւն (էջ 181 ա)։

Անբարոյական «անբարոյի», առանց աչքերը բացելու»։ Խոնարհեալք ի նա և անբարոյական ակամբ ի տիրականն պնդեցեալք (էջ 45 ր)։

Գեղեցկատաղութիւն «գեղեցիկ բանաստեղծութիւն»։ Հեթանոսացն իմաստունք և բանեղք սքանչացան ընդ գեղեցկատաղութիւնն և ընդ որ մասնաւոր փութալի է առ ի նոցանէ պերճաբանելն (էջ 296 ա)։ — Ասիկա մեկնելով լծ. Պրպմ. էջ 728, կ'ըսէ. «Ընդ գեղեցկատաղութիւնն. լծ. Տաղ է չափաւոր բանն ի սկիզբն կամ ի վերջն»։

Գերվերագոյն «ամենէն գերազանց»։ Արդ՝ վայել է յոյժ գերվերագունին գերունակութեանց, հեզ և հանդարտ խոհմտութիւն (էջ 280 ա)։

Գործականաւոր «գործող, ընող, կատարող» (որ և գործատրական)։ Ի հաստատութիւն մեզ և ընդունողաց զբանն, վայելչաբար ընթացողաց և գործականաւորաց ուղղութեանց, առ ի զգուշութիւն կամ յանդիմանութիւն անհաւատիցն (էջ 94 ր)։

Երկատեսակեղ «երկու տեսակի վերածել, երկու կերպ դնել»։ Կործանեն առ ի նոցանէն բանքն երկատեսակելով, քանզի զաւանդեալն մեզ հաւատ ստացուցանեն (էջ 299 ա)։

Երկրպագելի «երկրպագելու արժանի»։ Զիարդ եղիցի երկրպագելի որ ընդ երկրպագուս է շարադասեալ (էջ 260 ր)։

Մատայալայեղու «ծառայի վայել կերպով»։

պով»։ Քանզի ոչ էր այլազգ պատուել զծառային, եթէ ոչ էր եղեալ իւր ծառայովայեղուն (էջ 330 ա)։

Համանձն «ընկերակից»։ Ողջախոհացն պիտոյ զով ասեմք հաւատակցաւ և համանձանց անհատաբար ճեպիլ յայս զործ (էջ 423 ա)։

Հասանելի «հասնելիք, որ կարելի է հասնիլ»։ Խոր է խորհուրդս, այլ որոց ըստ մասին դնեն և որոշեն, դժուարաւ հասանելի և տարակուսելի ճշմարտապէս (էջ 252 ա)։

Մարբեի «որ կրնայ մաքրուիլ»։ Դժուարաւ մաքրելի քան զառաջնոյն յանցանաց ֆեաա (էջ 259 ր)։

Մշտեղ «միշտ երեցող»։ Ստոյգ և մշտեղ ևն և յարամնաց ունելով զպայծառութիւնդ (էջ 113 ր)։ — Այս բարդ գիտէ նշէր, բայց պիտի կը համարէ և կ'ուղղէ միշտ երեկ։ Առձ. Բառ. Հետեւած է այս սրբագրութեան և իր ցանկէն ջրն ջրած է բառս. բայց ես կը կարծեմ թէ միշտ երեկ ձեւ մը շատ անյարմար է տեղին և մշտեղ ձեւը նորէն պէտք է պահել։ Նմանեցուցանելի «որ կարելի է նմանցնել»։ Որ լուսնի նմանեցուցանելի է, թոյլ տալով զմեծագոյնն ճշմարտութեան ճառագայթից (էջ 119 ր)։

Տարակուսելի «տարակուսական, երկբայելի»։ Դժուարաւ հասանելի և տարակուսելի ճշմարտապէս (էջ 252 ա)։

Տախտ. անստոյգ բառ. «Այստիկ և յոյժ խոհականապէս վճարեալք զինքեանս յայսոցիկ պատճառաց, անթիժ հաւատոյն տոփոռաց հաւատարմացուցանել զինքեանս փութացեալ» (էջ 428)։ Զարմանալի է որ Տաթեւացոյն լուծման մէջ (էջ 767 ա) այս անուր բառիս մասին խօսք անգամ չկայ։ Զգիտէ նաեւ Երեմիայի Բառգիրքը։ Ուստի կ'ենթադրեմ որ հասարակ վրիպակ մ'է, փոխանակ գրելու սուփոյրաց. որով անթիժ հաւատոյն տոփոռաց կ'ըլլայ «անթիժ հաւատքին փափագողներուն, ճշմարիտ հաւատացեալներուն»։

Փոխատարիլ «ինքը նոյն մնալով՝ ուրիշներու հետ միաւորիլ»։ Ոչ է պիտոյ

Գ Ր Ա Կ Ա Ն

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

(շար. տես 271)

Սիրոյ ըմբռնումը

Մենք սիրով և աղօթքով կը ծնանինք. մեր արեան և միսին մէջ աննիւթ զոյակ. ներ կան, որ ծնողներէն կու գան, և ծնունդէ ծնունդ կը փոխանցին պարտադրուելով մեր վրայ ճակատագրի նման. շատ անգամ անոնցմէ կը կախուին սերունդներու հոգիի և մաքմնոյ ժառանգութիւնը. այս ժառանգութիւնը այնպէս չի մնար, այլ տարինեւրու յառաջելով կը բերէ զաղափարականի մը ծնունդը՝ որ կը ճոխացնէ և կը զեղեցկացնէ մեր կեանքը և կամ կ'աղքատցնէ ու կը նսեմացնէ:

Տեսէք պատանի մը, հագիւ շրջանաւարտ, իր ընտանեկան ժառանգութեան պատուաւորած է զրական ժառանգութիւն մըն ալ. իր ընթերցումները քանաստեղծ. ներու և վիպական դարձող գործերն եղած են. տարիներ ամբողջ ունեցած է միակ պատկեր մը աչքերուն առջև, միակ գաղափար մը մտքին մէջ, միակ զգացում մը սրտին մէջ, որոնք իրեն մոռցնել տուած են ամէն ինչ. Ամենօրեայ կեանքին մէջ նայուածքներուն հանդիպած են սիրազեղ մերկութիւններ լուսապայծառ ճառագայթ. ներու ներքեւ, և սիրոյ կայծը՝ որ ծայր տուած էր՝ սկսեւր է բոցավառիկ և հրդեհիւ. Այս կէս երազներու խանդավառումին մէջ կը կարծէ լսել միալար բարախումները զոյգ սրտերու, մաքրափայլ և շուշանագեղ, բարախումներ՝ որ կը թուին ըլլալ երջանկութեան մը սկզբնաւորութիւնը, որ երթալով պիտի ուռճանայ ծածկելու բովանդակ կեանքի ընդարձակութիւնը. Եւ քանաստեղծներ՝ հրաաթափած այս տեսիլէն՝ կը տեսնէ անոր պատկերը բիւրեղացած իր բիրբրուն մէջ, և քանի՜ կ'ուզէ զայն ուրուազրել՝ անի այնքան կ'աղօտանայ և կը նսեմանայ անհետանալու աստիճան.

ասան երկունս և ծնունդ ի կնոջէ զրել մեզ միածնին, այլ համարիլ յաւէտ զբանին բնութիւն ի կնաստս յայս և ի հոգեղէնս փոխառարիլ մարմին (էջ 231 ա): — Բառին ձեւ կասկածելի է, և կրնայ ըլլալ փոխատրիլ, որովհետև Տաթեւացւոյն լուծման մէջ, ուր բառին մեկնութիւնը կը տրուի, նոյնը կը կրկնուի երկու անգամ փոխատարիլ և երկու անգամ ալ փոխատրիլ ձեռով. «փոխատրեալ. Այլ է փոխազրելն և այլ է փոխատարելն. զի փոխազրեալն է ի բաց փոխութիւն զիրն և ոչ թողուլ ի նոյնութեան մնալ. նոյն է և փոխարկելն, իսկ փոխատրելն է՝ որով միաւորի յայլս և մնայ ի նոյնութեան. Եւ տես զի աստ փոխատրեալ ասէ զապականութեան և ըզմեղաց... (էջ 545 ա): Յոյն բնագրին համեմատութիւնը կրնայ որոշել թէ երկու ձեւերէն ո՞րն է միայն ուղիղ:

Օժակոյ «օժանդակ, օժանդակութիւն». եթէ մարդ առեալ որպէս զայլ ոք քան զինքն որդի Աստուծոյ Բան որպէս զօժանդ ոք իւրոցն կամաց երեւցոյց զնա (էջ 328 ա): — Բառիս նշանակութիւնը ստոյգ է. համու. էջ 329 ա՝ նոյն ձևին կրկնութիւնը. «Քանզի հովիւ զուով դնէր զնա մարգարէ և իւրոցն կամացն օժակոյակ կատարէր»: Բայց կրնայ անստոյգ համարուիլ բառիս ձեւ՝ փխ. օժակոյակ, որովհետև Տաթեւացւոյն լուծման մէջ՝ էջ 737 օժակոյ չի յիշուիլ:

Օրհնաբանիկ «օրհնութեամբ զովարանուիլ». հաց հոգեւոր հասաւասէ զսիրտ մարդոյ, ըստ որում որ ի գիրս Սաղմոսացն օրհնաբանի (էջ 296 ա):

*
**

Այս բոլորէն յետոյ՝ կը նկատեմ որ Պարոպմանց զրոց մէջ, էջ 449 ա կայ ներգործողագոյն բառը և էջ 273 բ կայ սկզբնազունութիւն բառը, որոնք թէև նոր Հայկականի մէջ յիշուած են, բայց Առձեռնի մէջ աչքէ վրիպած են:

Հ. ԱՃԱՌԵԱՆ